ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ

Արսեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության ամբիոնի ավագ դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

Անչափահասների գործերով վարույթի գլխավոր սկզբունքը դրա առավելագույնս անհատականացված լինելն է: Ինչպես իրավացորեն նշում է Ֆ. Բագաուտդինովը, «դա նշանակում է, որ դատավարության կենտրոնում գտնվում են անչափահասի անձը և նրա կողմից կատարած իրավախախտման պատճառները: Հանցագործություն կատարած անձը և հանցագործության պատճառները քննության ընթացքում պետք է ուսումնասիրվեն հնարավորինս կարճ ժամկետում»[1]:

Անչափահասների գործերով վարույթի հատուկ կարգն առաջին հերթին ուղղված է այդ անձանց անհիմն կասկածանքից կամ մեղադրանքից պաշտպանելուն, գործի արդարացի քննությանը և այն բանի ապահովմանը, որ վարույթի ընթացքում ցանկացած միջոցի կիրառումը միշտ համաչափ լինի անչափահասի անձնավորությանը և հանցագործության հանգամանքներին[2]: Դրանով պայմանավորված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.) նախատեսում է հատուկ հանգամանքների լրացուցիչ շրջանակ, որոնք պետք է պարտադիր պարզվեն յուրաքանչյուր անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի ընթացքում:

Նշված գաղափարն իր արտացոլումն է ստացել նաև Միավորված ազգերի կազմակերպության «Նվազագույն ստանդարտ» կանոններում, որը վերաբերում է անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացմանը («Պեկինյան կանոններ»՝ հաստատված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1985 թ. նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով), որի 5.1. կետի համաձայն՝ անչափահասների գործերով արդարադատության համակարգը պետք է հատկապես կարևորի անչափահասի բարեկեցությունը և ապահովի անչափահաս իրավախախտների նկատմամբ կիրառվող ցանկացած միջոցի միշտ համարժեքությունը թե՛ իրավախախտների առանձնահատկություններին և թե՛ իրավախախտման հանգամանքներին: «Պեկինյան կանոններում» տեղ գտած այդ դրույթով է պայմանավորված անչափահասների գործերով հատուկ ապացուցման առարկայի սահմանումը:

Վ. Կ. Վուկոլովը անչափահասների գործերով ապացուցման առարկայի վերաբերյալ առանձնացնում է երեք տեսակետ. 1) նշված կատեգորիայի գործերով ապացուցման առարկան «հատուկ է», 2) այդ կատեգորիայի գործերով ապացուցման առարկան ընդհանուր ապացուցման առարկայի համեմատ ընդլայնված է, այսինքն՝ «լրացուցիչ է», 3) ա-

---

[1] Տե՛ս **Багаутдинов Ф.** Ювенальная юстиция начинается с предварительного следствия http://www.lawmix.ru/comm/4744/ (20.08.13)

[2] Տե՛ս **Андриянова О. Ю.** Особенности судопроизводства по уголовным делам о преступлениях несовершеннолетних. Дисс. канд. юрид. наук. Владимир, 2006, с. 49.

պացուցման առարկան մանրամասնեցված է[3]: Կարծում ենք, որ այս առումով իրավացի է Տ. Տ. Բալաշովը, որ անչափահասների գործերով ապացուցման առարկան կազմող հանգամանքները ավելի լայն են ՌԴ քր. դատ. օր.-ի 73-րդ հոդվածում նախատեսված ապացուցման ենթակա ընդհանուր հանգամանքներից, քանի որ այդ գործերով պահանջվում է պարզել նաև տարբեր ժողովրդագրական, իրավական, սոցիալ-հոգեբանական և այլ տվյալներ, որոնք ունեն հատուկ նշանակություն իրավախախտ անչափահասի նկատմամբ խելամիտ և մարդասիրական ներգործության միջոցներ կիրառելու համար[4]:

Հարկ է նշել, որ նախկին ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ ՀԽՍՀ քր. դատ. օր.), ի տարբերություն գործող քր. դատ. օր.-ի, որոշակիորեն ընդլայնված և մանրամասնեցված էր անչափահասների գործերով ապացուցման առարկան կազմող հանգամանքները: Այսպես, համաձայն ՀԽՍՀ քր. դատ. օր.-ի 393-րդ հոդածի՝ «անչափահասների գործերով նախաքննություն կատարելիս և դատարանում դրանք քննելիս, բացի սույն օրենսգրքի 54 հոդվածում [Քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքները] նշված հանգամանքներից, անհրաժեշտ է նաև պարզել.

1) անչափահասի տարիքը (ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը).
2) անչափահասի առողջության և ընդհանուր զարգացման վիճակը: Եթե տվյալներ կան անչափահասի այնպիսի մտավոր հետամնացության մասին, որը կապված չէ հոգեկան հիվանդության հետ, պետք է նաև պարզել, թե նա կարող էր արդյոք լիովին գիտակցել իր գործողությունների նշանակությունը և որքանով կարող էր ղեկավարել դրանք.
3) անչափահասի ինքնության բնութագիրը.
4) անչափահասի կյանքի և դաստիրականության պայմանները.
5) այլ հանգամանքներ, որոնք բացասաբար են ազդել անչափահասի դաստիարակության վրա.
6) անչափահասին հանցավոր գործունեության մեջ ներգրավելու չափահաս դրդիչների և այլ անձանց առկայությունը»:

Գործող քրեադատավարական օրենսգիրքն անհասկանալի պատճառով նեղացրել է այդ հանգամանքների շրջանակը և սահմանել, որ, բոլոր գործերով հաստատման ենթակա հանգամանքներից բացի, անչափահասների գործերով անհրաժեշտ է պարզել նաև անչափահասի՝

1) տարիքը (ծննդյան օրը, ամիսը, տարին).
2) կյանքի և դաստիարակության պայմանները.
3) առողջության և ընդհանուր զարգացվածության վիճակը (440-րդ հոդված):

Անչափահասների գործերով ապացուցման առարկայի վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը *Ա. Առուստամյանի վերաբերյալ գործով,* համաձայն որի՝ «անչափահասի վերաբերյալ գործի քննության ժամանակ, ի թիվս այլոց, ենթակա են պարզման նաև հետևյալ հանգամանքները՝

1. անչափահասի վրա այլ անձանց ազդեցությունը,
2. հանցանքի կատարմանը նպաստող պատճառները և պայմանները,
3. անչափահասի սոցիալական ինտեգրման աստիճանը,

---

[3] Տե՛ս **Вуколов В. К.** Уголовно-процессуальные особенности производства по делам несовершеннолетних в суде первой инстанции: автореф. дис.… канд. юрид. наук. М., 1982. с. 12.

[4] Տե՛ս **Балашов Т. Т.** Актуальные проблемы производства по делам о преступлениях несовершеннолетних (уголовно-процессуальные и организационно-правовые аспекты). Автореф. дисс. доктора. юрид. наук. Бишкек, 2011. с. 24.

4. հոգեկան խանգարումների հետ չկապված մտավոր թերզարգացվածության մասին վկայող տվյալների առկայությունը»[5]:

Մեջբերումներից հետևում է, որ անչափահասների գործերով ապացուցման առարկայի յուրահատկությունը այն է, որ այնտեղ ներկայացված են ինչպես ընդհանուր ապացուցման առարկան, որը ենթակա է պարզման բոլոր քրեական գործերով, այնպես էլ հատուկ հանգամանքներ, որոնք վերաբերում են միայն անչափահասների գործերով վարույթին[6]: Անչափահասների գործերով ապացուցման առարկայի յուրահատկությունը պայմանավորված է հատուկ սուբյեկտով՝ քրեական հետապնդման ենթարկված անչափահասով, և մեծ հաշվով ուղղված է անչափահասի անձի ուսումնասիրմանը, այդ իսկ պատճառով էլ օրենսդիրը մանրամասնել է այն[7]:

Անչափահասների գործերով ապացուցման առարկան կազմող հանգամանքների շարքում օրենսդիրը առաջին հերթին նշել է անձի ***տարիքի (ծննդյան օրը, ամիսը, տարին)*** պարզումը: Անկասկած, անձի ճիշտ տարիքի պարզումը նրա համար կարող է առաջ բերել քրեաիրավական և քրեադատավարական տարբեր հետևանքներ: Այս առումով, ինչպես նշում է Տ. Տ. Բալաշովը, անչափահասի տարիքի պարզումն անհրաժեշտ է. ա) մեղադրյալի անձը պարզելու և նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը որոշելու համար, բ) կոնկրետ գործողությունների կատարման հնարավորությունը որոշելու՝ հաշվի առնելով անչափահասի ֆիզիկական վիճակը, գ) քրեական գործով վարույթի ընթացքում հատուկ իրավունքներից օգտվելու, դ) քննչական գործողություններ կատարելիս անձի տարիքը և սոցիալ-հոգեբանական վիճակը հաշվի առնելու, ե) քրեաիրավական նորմերով սահմանված պատժի տեսակը, չափը ճիշտ կիրառելու և դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հարցը լուծելու համար և այլն[8]:

Անչափահասի տարիք ասելով՝ տվյալ դեպքում պետք է հասկանալ կասկածյալի կամ մեղադրյալի ապրած օրացուցային տարիների, ամիսների և օրերի ճիշտ թիվը: ՌԴ Գերագույն դատարանի՝ «Անչափահասների հանցագործությունների վերաբերյալ դատական պրակտիկայի» 14.02.2000 թվականի № 7 պլենումի որոշման 7-րդ կետի համաձայն՝ անձը քրեական պատասխանատվության տարիքի հասած է համարվում ոչ թե իր ծննդյան օրը, այլ դրան հաջորդող օրվա ժամը 24.00-ին: Անձի տարիքը որոշվում է ոչ թե նրա խոսքերի հիման վրա, այլ ծննդյան վկայականի կամ անձնագրի միջոցով: Նշված փաստաթղթերի պատճենը քրեական գործին կցվում է միայն այն դեպքում, երբ քննիչը դրանք ուսումնասիրելուց հետո համոզվում է դրանց իսկությանը: Կարծում ենք, այս առումով իրավացի է Օ. Լ. Կուզմինան, ըստ որի՝ անձի տարիքը պետք է հաստատվի ոչ թե անձնագրի կամ ծննդյան վկայականի, այլ դրանց զննության արձանագրության միջոցով (փաստաթղթի զննությանը համապատասխան)[9]:

Այն դեպքում, երբ բացակայում են անձի տարիքի վերաբերյալ պաշտոնական փաստաթղթերը, կամ ինչ-ինչ պատճառներով հնարավոր չէ ձեռք բերել դրանց պատճենը, ինչպես նաև՝ երբ կասկածներ կան փաստաթղթում առկա տեղեկությունների իսկության

---

[5] Տե՛ս Ա. Առուստամյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՏՂ/0145/01/ որոշման 17-րդ կետը:

[6] Տե՛ս **Исакова Т. В.** Производства по уголовным делам в отношении несовершеннолетних. Автореф. дисс. канд. юрид. наук. Иркутск, 2009, с. 17.

[7] Տե՛ս **Дудин Н. П.** Предмет доказывания по уголовным делам в отношении несовершеннолетних // Криминалистъ: научно-практический журнал, 2010, № 2(7), с. 37.

[8] Տե՛ս **Балашов Т. Т.** , նշվ. աշխ., էջ 24-25.

[9] Տե՛ս **Кузьмина О. Л.** Процессуальная форма судопроизводства по уголовным делам в отношении несовершеннолетних. Автореф. дисс. канд. юрид. наук. – Калининград., 2005, с. 17.

վերաբերյալ, ապա պարտադիր պետք է նշանակվի դատաբժշկական փորձաքննություն:

Բոլոր այն դեպքերում, երբ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի տա-րիքը հաստատվում է դատաբժշկական փորձաքննությամբ, անչափահասի ծննդյան օր է համարվում փորձագետի կողմից նշված տարվա վերջին օրը, իսկ տարիքը նվազագույնով և առավելագույնով հաշվելու դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել անձի՝ եզրակացությամբ ենթադրվող նվազագույն տարիքից[10]: Նշված պահանջը, մեր կարծիքով, ևս մեկ անգամ ընդգծում է ոչ միայն անչափահասների գործերով վարույթի հատուկ բնույթը, այլ նաև վերջիններիս նկատմամբ դրա մարդասիրական և խնամատար դրսևորումը:

Անչափահասների գործերով ապացուցման առարկան կազմող հաջորդ ***հանգամանքը նրա կյանքի և դաստիարակության պայմանների պարզումն է***: «Պեկինյան կանոնների» 16.1. կետում նշված է, որ, մանր իրավախախտումներից բացի, մնացած բոլոր դեպքերում, նախքան իրավասու մարմնի կողմից պատիժ նշանակելը, ներգործության միջոց նշանակելիս անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել անչափահասի կենսագրությունն ու կենսապայմանները կամ իրավախախտումը կատարելու հանգամանքները՝ իրավասու մարմնի կողմից տվյալ գործով ողջամիտ վճիռ կայացնելուն նպաստելու նպատակով: ՀՀ քր. դատ. օր.-ի 440-րդ հոդվածի 2-րդ կետը նույնպես սահմանում է անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանների պարտադիր պարզման պահանջ: Օրենսդիրը, ամրագրելով անչափահասների գործերով հաստատման ենթակա հանգամանքների ցանկում անձի կյանքի և դաստիարկության պայմանների պարզման պահանջ, չի բացահայտում դրանց բովանդակությունը, ինչը պրակտիկայում հանգեցնում է այդ հանգամանքները ոչ բավարար ամբողջությամբ պարզելուն:

Դատավարական իրավունքի տեսության մեջ դատավարագետները անձի կյանքի և դաստիարակության պայմանները բնութագրում են տարբեր կերպ: Այսպես, «Յուվենալ արդարադատության մասին» ՌԴ օրենքի նախագծի հեղինակները անձի կյանքի և դաստիրակության պայմանները կազմող հանգամանքները դասակարգում են հետևյալ խմբերի.

1) Ընտանեկան պայմանները. ընտանիքի կազմը, նյութական, բնակարանային պայմանները, երեխաների և տարիքով անձանց հարաբերությունները, ազատ ժամանակ ընտանիքի զբաղմունքը, երեխաների նկատմամբ ծնողների հսկողության ձևերը:

2) Դպրոցի, բուհի, ուսումնարանի և այլ ուսումնական հաստատությունների պայմանները, որտեղ է սովորում կամ աշխատում անչափահասը, նրա հարաբերությունները ուսման կամ աշխատանքի վայրի անձանց հետ:

3) Անչափահասի վարքագիծը ընտանիքում և աշխատանքի կամ ուսման վայրում, շփումը այլ անձանց հետ և այլն[11]:

Անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները բնութագրող այդպիսի հանգամանքներ թվարկված են նաև Ուկրաինայի քրեական դատավարության նոր օրենսգրքի 487-րդ հոդվածում:

Քննարկվող հիմնահարցի վերաբերյալ հետաքրքիր մոտեցում են հայտնել Ն. Ի. Գուկովսկայան, Ա. Ի. Դոլգովան, Գ. Մ. Մինկովսկին, որոնք կարծում են, որ անչափահասի կյանքի և դաստիարկության պայմանների բովանդակությունը կազմում են.

---

[10] Տե՛ս Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 14 февраля 2000 г. № 7 «О судебной практике по делам о преступлениях несовершеннолетних» http://www.rg.ru/oficial/doc/ min_and_vedom/plenum/14_02_7.htm(13.07.13)

[11] Տե՛ս **ЛаринА. М., Мельникова Э. Б., Савицкий В. М.** Закон о ювенальной юстиции в Российской Федераци (проект) //Уголовный процесс России: лекции-очерки.-М.: БЕК. 1997, с. 293.

ա) ընտանեկան դրության օբյեկտիվ պայմանները,

բ) այնտեղ բնակվող անձանց բնութագիրը և նրանց հարաբերությունը անչափահասների հետ,

գ) ընտանիքի կենցաղային վիճակը,

դ) անչափահասի նկատմամբ իրականացվող դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը ուսման (աշխատանքի) և բնակության վայրում,

ե) այն միջոցները, որոնք նախկինում իրավասու մարմինների կողմից կիրառվել են իրավախախտում կատարած անչափահասի նկատմամբ[12]:

Ելնելով տեսական գրականության մեջ տեղ գտած տեսակետներից, քննչական և դատական պրակտիկայի վերլուծությունից, կարելի է առանձնացնել անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները բնութագրող հետևյալ հանգամանքները.

1) *Անչափահասի ընտանեկան պայմանները.* ընտանիքի կազմը, երեխաների քանակը, ընտանիքի նյութական դրությունը, տեղեկություններ այն մասին, թե անչափահասը փաստացի բնակվում է արդյոք ընտանիքի անդամների հետ, ընտանիքի անդամների միջև առկա հարաբերությունները, անչափահասի՝ առանց հսկողության մնալու պատճառները, եթե այդպիսիք կան:

Նշված տեղեկությունները ունեն շատ կարևոր նշանակություն, քանի որ անչափահասի սկզբնական ձևավորումը տեղի է ունենում ընտանիքում, և այդ պայմանները կարող են ինչպես դրական, այնպես էլ բացասական անդրադառնալ անչափահասի ձևավորման վրա:

2) *Ուսման և աշխատանքի վայրի պայմանները.* քրեական գործով վարույթի ընթացքում անհրաժեշտ է հավաքել հետևյալ տեղեկությունները՝ ինչպիսի դպրոց է հաճախում անչափահասը և որերորդ դասարանում է սովորում, առաջադիմությունը, վարքը, մասնակցում է արդյոք դպրոցական հանրային կյանքին, կիրառվել են արդյոք նրա նկատմամբ դաստիարակչական միջոցներ և ինչպիսի խախտման համար: Եթե անչափահասն աշխատում է, ապա անհրաժեշտ է պարզել, թե երբվանից և որտեղ է աշխատում, որքան է աշխատավարձի չափը, ուսման հետ համատե՞ղ է աշխատում: Եթե անչափահասը թողել է ուսումը և աշխատում է, ապա անհրաժեշտ է պարզել դրա պատճառները:

3) *Անչափահասի շրջապատը, կապերը և հետաքրքրությունների շրջանակը.* ինչպե՞ս է տնօրինում ազատ ժամանակը, կարդու՞մ է արդյոք թերթեր, ամսագրեր, գրքեր, հաճախու՞մ է արդյոք թատրոն և կինո, ովքե՞ր են նրա ընկերները և այլն: Բացի այդ, անչափահասի կյանքի պայմանների մասին ամբողջական տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք նա օգտագործու՞մ է ոգելից խմիչքներ, թմրամիջոցներ, եթե այո, ապա երբ և ի՞նչ չափով, ովքե՞ր են դրանք տրամադրում նրան, որտե՞ղից է ձեռք բերել գումար, այդ իրավիճակում կատարել է արդյոք իրավախախտում:

4) *Անչափահասի նախկին վարքագիծը.* այս հանգամանքը պարզելու համար էական նշանակություն ունեն հետևյալ տեղեկությունները՝ կատարե՞լ է նա արդյոք հանցագործություն կամ այլ իրավախախտում, որտե՞ղ և ե՞րբ, ինչպիսի՞ հանցագործություն է կատարել, ո՞ր տարիքում, քանի՞ անգամ, և ինչպիսի՞ պատիժ է նշանակվել կատարված արարքի համար, որտե՞ղ է կրել պատիժը, գտնվե՞լ է արդյոք հատուկ դաստիարակչական հաստատությունում, որտե՞ղ և ինչու՞, ի՞նչ ժամկետում, ենթարկվե՞լ է արդյոք վարչական պատասխանատվության:

5) *Անչափահասի վարքը մինչև հանցագործություն կատարելը.* բացահայտվե՞լ է արդյոք նրա կողմից նախկինում կատարված հանցագործությունները (եթե այդպիսիք ե-

---

[12] Տե՛ս **Гуковская Н. И., Долгова А. И., Миньковский Г. М.** Расследование и судебное разбирательство дел о преступлениях несовершеннолетних. М., 1974. с. 23-24.

ղել են), փոխվե՞լ են արդյոք նրա նախկին կյանքի և դաստիարակության պայմանները:

Նշված հանգամանքները պետք է հետազոտվեն բազմակողմանի, դրանց համակցությամբ, հակառակ պարագայում հնարավոր է հանգել սխալ հետևության:

Անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանների մասին ամբողջական տեղեկությունների ձեռքբերումն օգնում է *պարզելու այն պատճառներն ու պայմանները, որոնք նպաստել են հանցագործության կատարմանը*: Օրենսդրական այն դրույթը, որ անհրաժեշտ է վեր հանել անչափահասների կողմից հանցագործության կատարմանը նպաստող պայմաններն ու պատճառները, պահանջում են յուրաքանչյուր քրեական գործով առանձնահատուկ ուշադրություն դարձնել. ա) անչափահասի մեջ հակահիրավական հայացքների և սովորույթների առաջացման պատճառներին, բ) հանգամանքներին, որոնք նպաստել են հանցավոր վարքագծի ձևավորմանը և անմիջականորեն հանգեցրել են հանցագործության կատարմանը, գ) հանգամանքներին, որոնք ստեղծել են բարենպաստ պայմաններ հանցագործության նախապատրաստման և կատարման համար[13]:

Դատավարական իրավունքի տեսության մեջ տեսակետ է հայտնվել այն մասին, որ անհրաժեշտ է «կյանքի և դաստիարակության պայմաններ» տերմինը փոխարինել «մերձակա սոցիալական միջավայր» ձևակերպումով, քանի որ վերջինս հստակ արտացոլում է սոցիալական միջավայրը, պարզում է դրա վճռական ազդեցությունը անչափահաս իրավախախտի վրա: Այդ մերձակա միջավայրի կառուցվածքից անհրաժեշտ է առանձնացնել (հետագայում նաև ամրագրելով օրենքով նախատեսված ապացուցման ենթակա հանգամանքների շարքում) հետևյալ տարրերը՝ ընտանիքը, աշխատանքային կոլեկտիվը, որտեղ աշխատում է անչափահասը, հասարակական միավորումները, որտեղ հասարակական հիմունքներով աշխատում է անչափահասը, անչափահասի ընկերական շրջապատը, ուսման վայրի կոլեկտիվը, որտեղ սովորում է անչափահասը, ինչպես նաև դրանց դրական և բացասական ազդեցությունն անչափահասի վրա[14]: Կարծում ենք, որ նշված տեսակետի հետ դժվար է համաձայնվել, քանի որ «կյանքի և դաստիարակության պայմաններ» տերմինը նույնպես ամբողջությամբ արտացոլում է սոցիալական միջավայրը, որը ազդում է անչափահասի վրա: Բացի դրանից, այդ հասկացությունը առայժմ բացահայտված չէ ինչպես գիտության մեջ, այնպես էլ քննչական և դատական պրակտիկայում: Այլ բան է, որ օրենսդիրը չի հաստակեցնում, թե ինչ պետք է հասկանալ «կյանքի և դաստիարակության պայմաններ» ասելով, ինչը, իհարկե, քննչական պրակտիկայում մեկնաբանվում է տարբեր կերպ: Դրանով պայմանավորված՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ քր. դատ. օր.-ում սահմանել անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները բնութագրող հանգամանքների շրջանակը, որպեսզի այդ դրույթը միասնական կիրառություն ստանա պրակտիկայում:

ՀՀ քր. դատ. օր.-ի 440-րդ հոդվածի 3-րդ կետում անչափահասների գործերով վարույթի ընթացքում հաստատման ենթակա հանգամանքների շարքում նշված է նաև անձի ***առողջության և ընդհանուր զարգացվածության վիճակը պարզելու պահանջ***, մասնավորապես՝ տրամաբանորեն մտածելու, որոշակի իրադրությունում կողմնորոշվելու նրա ունակությունը և այլն: Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի մեջ հոգեկան խանգարումների հետ չկապված մտավոր թերզարգացվածության մասին վկայող տվյալների առկայության դեպքում անհրաժեշտ է պարզել դրա աստիճանը, ինչպես նաև իր գործողությունների նշանակությունն ամբողջությամբ գիտակցելու և դրանք ղեկավարելու նրա ունակությունը[15]:

---

[13] Տե՛ս **Дудин Н. П.** նշվ. աշխ., էջ 39-40:

[14] Տե՛ս **Попов А. Н.** Особенности предварительного расследования по делам о преступлениях несовершеннолетних. Автореф. дисс. канд. юрид. наук. Красноярск, 2001, с. 16.

[15] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս, ԵՊՀ հրատ. Եր: 2010, էջ 498:

ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՏԴ/0145/01/ որոշման ուժով, բացի ՀՀ քր. դատ. օր.-ի 440-րդ հոդվածով սահմանված ապացուցման առարկան կազմող հանգամանքներից, անչափահասների գործերով վարույթի ընթացքում ***պետք է ապացուցվի նաև անչափահասի վրա այլ անձանց ազդեցությունը***: Նշված հանգամանքի պարզումը ունի կարևոր նշանակություն ինչպես մեղքի հիմնավորման, այնպես էլ պատասխանատվության ու պատժի անհատականացման համար: Այդ պահանջն ամրագրված է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս, ի թիվս այլոց, հաշվի են առնվում նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը: Այդ իսկ պատճառով վարույթն իրականացնող մարմնից պահանջվում է մանրամասն պարզաբանել չափահասների և անչափահասների հարաբերությունների բնույթը, քանի որ այդ տեղեկությունները կարող են ունենալ էական նշանակություն պարզելու, թե որքանով է չափահասը ազդեցություն ունեցել անչափահասի վրա հանցագործություն կամ այլ հակահասարակական արարքներ կատարելու համար:

Քրեադատավարական օրենսգրքի 440-րդ հոդվածում նախատեսված, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նշված հանգամանքների մասին ամբողջական տեղեկություններ կարելի է ստանալ հենց իրենց՝ անչափահասին, տուժողներին, վկաներին, անչափահասին և նրա կյանքի հանգամանքները լավ ճանաչող անձանց (օրինական ներկայացուցիչներ, հարևաններ, ընկերներ, աշխատանքային կոլեկտիվի անդամներ, դաստիարակչական հաստատության ներկայացուցիչներ, ուսուցիչներ, ոստիկանության անչափահասների գործերով տեսուչներ) հարցաքննելու, փորձագետի եզրակացությունը, իրեղեն ապացույցները, քննչական և դատավարական այլ գործողությունների արձանագրությունները, այլ փաստաթղթերը (աշխատանքի և ուսման վայրի բնութագրեր, ոստիկանությունից, բժշկական և այլ հաստատություններից տրված տեղեկանքներ և այլն) ուսումնասիրելու միջոցով: Այդ նպատակով անհրաժեշտ է օգտագործել բոլոր հնարավորությունները ՀՀ քր. դատ. օր.-ի 440-րդ հոդվածով սահմանված հանգամանքների մասին տեղեկութուններ հավաքելու համար: Չպետք է սահմանափակվել միայն դրանցից մեկով:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ընդհանուր առմամբ հետևելով միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված սկզբունքային դրույթներին, նախատեսել է անչափահասների գործերով վարույթին հատուկ մի շարք հանգամանքներ, որոնք, ինչ խոսք, վերջիններիս իրավունքների և օրինական շահերի ապահովման կարևորագույն երաշխիք են: Սակայն, դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ քրեադատավարական օրենսգրքում նախատեսված այդ համգամանքներն ամբողջական չեն և հետագա կատարելագործման կարիք ունեն: Անչափահասների գործերով ապացուցման առարկայի ընդլայնումը և հետագա նորմատիվ մանրամասնեցումը պրակտիկ անհրաժեշտություն են, քանի որ դրա հետագա ծավալուն կարգավորումը կատարված հանցագործության հանգամանքների, իրավախախտի անձի բազմակողմանի ուսումնասիրման էական երաշխիք կդառնա և կապահովի դատավարության դաստիարակչական ներգործությունը[16]:

[16] Տե՛ս **Тетюев С. В.** Перспективы развития действующего законодательства о производстве по уголовным делам в отношении несовершеннолетних.http://www.procuror.spb.ru/k711.html (23.08.13):

CIRCUMSTANCES TO BE PROVED IN CASES OF MINORS ACCORDING TO CRIMINAL PROCEDURE CODE OF THE RA

Arsen MARTIROSYAN
PhD of law, senior lecturer of department of Criminal Procedure of Academy of Police Educational complex of Republic of Armenia

The article is refers to subject of evidence in cases of minors. Within this article it was disclosed the definition of the subject of evidence of alleged category of cases and the content of the individual circumstances /elements/ constituting the subject of evidence. In particular, an attempt was made to clarify the content of the definitions of minors' age, their education and living conditions, health and general condition of development.

After studying subject of evidence in Cases of Minors the Author came to the conclusion that although, in general, Criminal Procedure Code of RA, following the requirements laid down in international instruments, provides specific circumstances which are subject of evidence in these category of cases, they are not sufficient and need further expansion and detalization. Therefore, have been presented some recommendations aimed at improving criminal procedure law by Aother.